



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱՐԱԿԵՆՏՐ



**ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ.  
21-րդ դարի մարտահրավերներ  
և հնարավորություններ**

**DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:  
Challenges and Opportunities of 21st Century**

**РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:  
ВЫЗОВЫ И ВОЗМОЖНОСТИ 21-ого века**

**ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ**

2017 թ., նոյեմբերի 22-24

**Երևան 2018**

ՀՏԴ 330:06  
ԳՄԴ 65  
S 778

Հրատարակվում է  
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

**Խմբագրական խորհրդի նախագահ՝**

**ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ**

ՀՊՏՀ ռեկտոր, Կ.գ.դ., պրոֆեսոր

**Խմբագրական խորհուրդ՝**

- ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ** - ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., դոցենտ  
**ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ** - ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր  
**ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ** - ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, Կ.գ.դ., պրոֆեսոր  
**ԽՈՐԵՆ ՄԻՆԻԹԱՐՅԱՆ** - ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, Կ.գ.թ., դոցենտ  
**ԱՇՈՏ ՍԱԼԼԱԶԱՐՅԱՆ** - ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր  
**ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ** - ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր  
**ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ** - ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., Կ.գ.դ., պրոֆեսոր  
**ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ** - ՀՊՏՀ պրոռեկտոր, Կ.գ.դ., պրոֆեսոր

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և  
S 778 հնարավորություններ: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ,  
2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06  
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

## ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՛ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հեղափոխություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրապարակապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հեղափոխական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հեղափոխական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այսօրեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հեղափոխություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահեղափոխական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հեղափոխ գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մատչում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՅԱՆ  
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

## ԼՈՒՍԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ

### ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

*Հիմնաբառեր.* սեփական կապիտալ, կանոնադրական կապիտալ, չբաշխված շահույթ, ֆինանսավորման աղբյուրներ, ֆինանսական քաղաքականություն

Ապահովագրական ընկերության սեփական կապիտալը դրա ֆինանսական հիմքն է և բնութագրվում է դրական գծերով: Սեփական կապիտալի ներգրավումը բավական դյուրին է, քանի որ ձևավորվում է՝ ի հաշիվ ներքին աղբյուրների: Գործող ապահովագրողի սեփական կապիտալի կառուցվածքը ձևավորում են կանոնադրական, պահուստային և լրացուցիչ կապիտալները, նպատակային ֆինանսական հիմնադրամները, չբաշխված շահույթը:

Սեփական կապիտալի կառավարումն արտահայտվում է ապահովագրական ընկերության ֆինանսական քաղաքականության մեջ՝ ինքնաֆինանսավորման անհրաժեշտ մակարդակի ապահովմամբ:

Ապահովագրական ընկերության սեփական կապիտալը դրա ֆինանսական հիմքն է և բնութագրվում է հետևյալ դրական գծերով.

- դյուրին ներգրավմամբ, քանի որ դրա մեծացման որոշումն (հատկապես՝ ներքին աղբյուրների հաշվին) ընդունում են սեփականատերերը և ֆինանսական կառավարիչները,
- շահույթի՝ գործունեության տարբեր ոլորտներում օգտագործմամբ, քանի որ անհրաժեշտություն չի առաջանում բանկային վարկի և փոխառության համար տոկոս մուծել,
- ֆինանսական կայունության ապահովմամբ զարգացման ընթացքում և բարձր վճարունակություն երկարաժամկետում:

Գործող ապահովագրողի սեփական կապիտալի կառուցվածքը ձևավորում են<sup>1</sup>.

- կանոնադրական կապիտալը,
- պահուստային և լրացուցիչ կապիտալը,
- նպատակային ֆինանսական հիմնադրամները,
- չբաշխված շահույթը:

Կանոնադրական կապիտալը սեփական կապիտալի առաջնային գումարն է, որը ներդրվում է ապահովագրական ընկերության ակտիվների ձևավորման համար՝ ապահովագրական գործի սկզբնական փուլում: Կանոնադրական կապիտալի ձևավորման գործ-

<sup>1</sup> Никулина Н.Н., Финансовый менеджмент страховой организации, “Юнити-Дана”, М., 2008, с. 139-145.

ընթացում և հիմնադիրների հետ հաշվարկների ժամանակ հատուկ նշանակություն ունեն մասնակիցների ներդրման ժամանակային ու որակական բնութագրիչները: Եթե միջազգային փորձում կանոնադրական կապիտալում ներդրումներ կարող են լինել շենքերը, շինությունները, սարքավորումները և այլ նյութական արժեքներ, դրամական միջոցները, հողի, ջրի և այլնի օգտագործման իրավունքը, ապա ՀՀ-ում միայն դրամական միջոցներն են համարվում այդպիսին:

Ապահովագրիչների և նոր ստեղծվող ապահովագրական ընկերության մյուս գործընկերների շահերից ելնելով՝ պետությունը սահմանում է կանոնադրական կապիտալի նվազագույն չափը, ձևավորման կարգը և փոփոխման սկզբունքները:

Կանոնադրական կապիտալի ավելացումն իրականացվում է՝

- նոր բաժնետոմսերի թողարկմամբ,
- չբաշխված շահույթի մի մասի միացմամբ,
- անդրամ թողարկմամբ՝ ի հաշիվ լրացուցիչ կապիտալի:

Կանոնադրական կապիտալի կրճատումն իրականացվում է հետևյալ ուղիներով.

- բաժնետոմսերի մի մասի ոչնչացմամբ (անվավեր հայտարարելով)
- դրանց անվանական արժեքի իջեցմամբ:

ՀՀ-ում կանոնադրական կապիտալի նվազագույն չափը կարգավորվում է ապահովագրական օրենսդրությամբ և սահմանվում 50 մլն դրամ, իսկ ընդհանուր կապիտալը՝ 1 կամ 1.5 մլրդ դրամ<sup>1</sup>:

Պահուստային կապիտալը սեփական կապիտալի մի մասն է և նախատեսված է տնտեսական գործունեության ներքին ապահովագրության համար: Պահուստը ձևավորվում է շահույթի հաշվին: Սեփական կապիտալի պահուստային մասի չափը որոշվում է հիմնադիր փաստաթղթերով: Պահուստային հիմնադրամին հատկացվող միջոցների նվազագույն չափը սահմանվում է օրենսդրությամբ՝ կանոնադրական կապիտալի 15%-ի չափով: Նպատակային օգտագործման հետևանքով պահուստային հիմնադրամի կրճատումը պահանջում է միջոցների հավելում հաջորդ հաշվետու ժամանակաշրջանում<sup>2</sup>:

Լրացուցիչ կապիտալը ձևավորվում է՝

- արտաշրջանառու միջոցների արժեքի աճի հետևանքով (վերագնահատումից հետո),
- արժեթղթերի անվանական արժեքի և իրացման (շուկայական) արժեքի տարբերության հետևանքով (կանոնադրական կապիտալի ձևավորման գործընթացում),
- ինֆլյացիոն գործընթացների հետևանքով:

Նպատակային ֆինանսական հիմնադրամները ձևավորվում են ֆինանսական միջոցների մուտքերով՝

- բյուջեից և արտաբյուջետային հիմնադրամներից,
- այլ կազմակերպություններից և ֆիզիկական անձանցից՝ նպատակային նշանակության միջոցառումների իրականացման համար:

<sup>1</sup> Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները, կանոնակարգ 3/02, էջ 3–4:

<sup>2</sup> Закон РФ "Об орган. стаж. дело в РФ", 2005.

Չբաշխված շահույթը աղբյուր է սեփական կապիտալի ձևավորման համար: Դա շահույթի այն մասն է, որը չի օգտագործվում ապահովագրական ընկերության սեփականատերերի և անձնակազմի կողմից, նախատեսված է կապիտալացման, այսինքն՝ ապահովագրական գործում կրկին ներդրման (վերարտադրության) համար:

Ֆինանսավորման սեփական միջոցները կարող են ձևավորվել հնչպես ներքին, այնպես էլ արտաքին աղբյուրներից: Ֆինանսական ռեսուրսների ներքին աղբյուրները սեփական կապիտալի գերադասելի մասն են (օրինակ՝ ամորտիզացիոն հատկացումներն ապահովագրական ընկերությունում ունեն կարևորագույն դեր՝ ի հաշիվ արտաշրջանառու ակտիվներում ամորտիզացվող մեծ տեսակարար կշռի և ամորտիզացիոն քաղաքականության, միաժամանակ, օժտված են արագացված և լրացուցիչ ամորտիզացիայով):

Ապահովագրողի սեփական ֆինանսական ռեսուրսների ձևավորման արտաքին աղբյուրները ներառում են լրացուցիչ բաժնետիրական կապիտալ, որը ներգրավվում է կանոնադրական կապիտալում՝ միջոցների լրացուցիչ մուծումների հաշվին և բաժնետոմսերի լրացուցիչ թողարկմամբ:

Ապահովագրական ընկերության սեփական կապիտալի ձևավորման արտաքին այլ աղբյուրներին են վերաբերում անհատույց տրված նյութական, ոչ նյութական, ֆինանսական օգնությունները:

Սեփական կապիտալի ինքնաճման հնարավորությունը սահմանավում է ապահովագրողի զուտ (չբաշխված) շահույթի ընդունելի մակարդակի ձևավորմամբ և սեփական աղբյուրների հաշվին՝ ֆինանսական հավասարակշռության պահպանման նրա ունակությամբ:

Ընդհանուր ծավալում սեփական կապիտալի տեսակարար կշռի նվազումը վկայում է ապահովագրական գործում ֆինանսական անկախության կորստի և ֆինանսավորման արտաքին (վարկային պարտավորության տեսքով փոխառու միջոցների) աղբյուրների մեծացման մասին:

Սեփական կապիտալի ընդլայնումը կարող է իրականացվել երկու աղբյուրի հաշվին. դիվիդենտային քաղաքականության փոփոխություն (վճարվող դիվիդենտների և շահույթի վերահինվետավորման միջև հարաբերակցություն) և բաժնետիրական կապիտալի ավելացում (բաժնետոմսերի լրացուցիչ թողարկում): Առաջինն առավել նախընտրելի է, քանի որ աշխատած և հնարավոր ամբողջ շահույթը պատկանում է ապահովագրական ընկերության տերերին: Երկրորդ աղբյուրի օգտագործման ժամանակ շահույթի մի մասը պետք է զոհել: Բաժնետոմսերի լրացուցիչ թողարկումը համարվում է թանկ և երկար ժամանակ խլող: Էմիսիան կարող է ուղեկցվել բաժնետոմսերի շուկայական գնի իջեցմամբ: Այդ պատճառով էլ կանոնադրական կապիտալի ավելացմանը նպատակահարմար է դիմել այն դեպքում, երբ ապահովագրողն աշխատում է հաջող, ունի ապահովագրական գործում ընդլայնման հեռանկար կամ էլ, ընդհակառակը, երբ բացակայում է այլ աղբյուրներից ֆինանսավորումը:

Ապահովագրական բիզնեսի ոլորտում կիրառվում են սեփական կապիտալի ընդլայնման տարբեր զուգակցումներ, հնարքներ: Այսպես՝ եթե ապահովագրողն ուղղորդվի

չբաշխված շահույթի աճով, ապա աղբյուրների միջև հարաբերակցությունը կփոփոխվի դեպի փոխառու միջոցների կրճատումը: Սեփական կապիտալի աճի հետ մեկտեղ, անհրաժեշտ է որոշակի հարաբերակցությամբ մեծացնել նաև փոխառու կապիտալը:

Սեփական կապիտալի կառավարումը ուղղված է ապահովագրական բիզնեսի շուկայական արժեքի առավելագունացմանը: Ապահովագրական ընկերության ղեկավարի կարևոր նպատակն ապահովագրական, ինվեստիցիոն և ֆինանսական ոլորտներում այնպիսի կառավարչական որոշումների ընդունումն է, որոնք հեռանկարում կբերեն սեփական կապիտալի շուկայական արժեքի բարձրացման և բաժնետերերի բարեկեցության աճի<sup>1</sup>:

Կառավարչական որոշումների ընդունումը և ապահովագրական գործի զարգացման ռազմավարության ձևավորումը պայմանավորված են, առաջին հերթին, բաժնետերերի, վարկատուների, բիզնեսում վերահսկվեստավորման միջև շահույթի բաշխման ունակությամբ և երկրորդ հերթին, կապիտալի կառուցվածքի օպտիմալացմամբ: Այս ուղղություններից սեփական կապիտալի շեղումը կարող է փոխհատուցվել փոխառու կապիտալով: Այդ նույն ժամանակ տոկոսադրույքների աճը երկարաժամկետ վարկի շուկայում կարող է խթանել սեփական կապիտալի ավելացումը: Իդեալական է համարվում, եթե սեփական կապիտալը ֆինանսավորում է բոլոր արտաշրջանառու և շրջանառու միջոցների միայն մի մասը:

Որպես կապիտալի հարաբերակցության ձևավորման հիմնական չափանիշ է համարվում սնանկացման և ֆինանսավորման «ոսկե կանոնը»՝ որի համաձայն կազմակերպության հեռանկարային հաշվեկշռում անհրաժեշտ է պահպանել հետևյալ պայմանները.

- սեփական շրջանառու միջոցների 10%-ը պետք է լինի հավասար գոնե արտադրական պաշարների և ծախսերի 50%-ին (իրական պատկերը ցույց է տալիս սեփական շրջանառու միջոցների կա՛մ պակասորդը, կա՛մ ավելցուկը),
- կայուն պասիվների գումարը պետք է հաշվեկշռվի արտադրական պաշարների մնացած 50%-ի հետ,
- հարկերի գումարը պետք է համապատասխանի կարճաժամկետ արժեթղթերին, ելնելով այն կանոնից, որ հարկերը պետք է վճարել դրանց համար սահմանված վերջին օրը,
- դեբիտորական պարտավորությունները պետք է համապատասխանեն կազմակերպության կրեդիտորական պարտավորություններին,
- տրված ավանսները պետք է հաշվեկշռվեն ստացված կանխավճարին և այլն:

Այսպիսով՝ ֆինանսական կառավարման մեջ «ոսկե կանոնի» նշանակությունը կարելի է ձևակերպել հետևյալ կերպ.

1. Ցանկացած կազմակերպություն պետք է պահպանի ֆինանսական հավասարակշռություն: Դրա պահպանումը փոխզիջման արվեստ է՝ եկամտաբերության ավելացման ձգտման և իրացվելության որոշակի մակարդակի պահպանման միջև:

<sup>1</sup> Ա. Ճուղուրյան, Կ.Աբգարյան, Ապահովագրական գործ, ուս. ձեռնարկ, «Օրենք և իրականություն», Եր., 2007, էջ 382–401:

2. Ֆինանսական հավասարակշռությունից դուրս գալը դյուրին է, բայց վերադառնալը՝ դժվար: Նույնիսկ ֆինանսական հավասարակշռության մեթոդներին տիրապետելով՝ դրանց կիրառումը գործնականում դժվար է:
3. Ի վնաս իրացվելիության՝ ռոպեական շահի հետևից ընկնելը կարող է ապահովագրողին բերել սնանկացման: Եթե բոլոր ապահովագրական ընկերություններն իրենց պրակտիկ գործունեությունում հետևեն ֆինանսավորման «ոսկե կանոնին», ապա սնանկացումը կբացառվի: Սակայն, իրական ապահովագրական բիզնեսում այս կանոնին հետևելը շատ բարդ խնդիր է, որը բխում է իրացվելիության, եկամտաբերության և ռիսկի հակասական մեծություններից: Այս հակասությունները, դրանց սրացումը և աճը հաճախ բերում են ապահովագրողի ֆինանսական հավասարակշռության ամբողջական կորստին և, ի վերջո, նրա սնանկացմանը:

Սեփական կապիտալի կառավարումն արտահայտվում է ապահովագրական ընկերության ֆինանսական քաղաքականության մեջ, կայանում է ինքնաֆինանսավորման անհրաժեշտ մակարդակի ապահովմամբ: Ֆինանսական քաղաքականության մշակումն անցնում է մի քանի փուլով: Առաջին փուլ՝ ապահովագրական ընկերության սեփական ֆինանսական ռեսուրսների ձևավորված ներուժի վերլուծություն, երկրորդ փուլ՝ ապահովագրական ընկերության սեփական ֆինանսական ռեսուրսների նկատմամբ պահանջ-մունքի սահմանում, ինչպես նաև սեփական աղբյուրների հաշվին լրացուցիչ ֆինանսավորման պահանջի հաշվարկ, երրորդ փուլ՝ սեփական ֆինանսական ռեսուրսների ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրների ընտրության վերաբերյալ կառավարչական որոշումների ընդունում:

## ЛУСИНЕ КАЗАРЯН

### УПРАВЛЕНИЕ СОБСТВЕННЫМ КАПИТАЛОМ СТРАХОВЩИКА

*Ключевые слова:* собственный капитал, уставной капитал, нераспределенная прибыль, источники финансирования, финансовая политика

*Собственный капитал страховой организации составляет ее финансовую основу и характеризуется рядом положительных черт. Привлечение собственного капитала довольно просто, особенно за счет внутренних источников. Структура собственного капитала, действующего страховщика образует: уставной капитал, резервный и добавочный капитал, целевые финансовые фонды, нераспределенная прибыль. Управление собственным капиталом отражается в финансовой политике страховой организации, заключающейся в обеспечении необходимого уровня самофинансирования.*

## LUSINE GHAZARYAN

### THE OWN CAPITAL MENEAGMENT IN INSURANCE COMPANYY

*Key words:* statutory capital, statutory capital, retained earnings, internal sources, financial policy



The statutory capital of the insurance company is its financial base and is characterized by a number of positive lines. First of all, it is easy to get involved, as it is done through internal sources and it is not necessary to pay a bank loan or loan. The structure of the existing insurer's own equity forms: statutory capital, reserve and additional capital, targeted financial funds, retained earnings. The structure of the existing insurer's own equity forms: statutory capital, reserve and additional capital, targeted financial funds, retained earnings. The charter capital is the primary equity capital invested in the formation of the insurance company's assets at the initial stage of the insurance business. Own capital management reflects the financial policy of the insurance company, providing insurmountable levels of self-financing.

#### **ԳԱՅԱՆԵ ՂՈՒԿԱՍՅԱՆ**

*Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների  
թեկնածու, դոցենտ, ՀՊՏՀ*

#### **ԱՐՄԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ**

*Տնտեսագիտության թեկնածու, ասիստենտ, ՀՊՏՀ*

### **ՀՀ ԲԱՆԿԵՐԻ ԿԼԱՍՏԵՐԱՑՈՒՄԸ ԵՎ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԿՈՆՈՆԵՆԻ ՆԵՅՐՈՆԱՅԻՆ ՑԱՆՑԻ ՄԻՋՈՑՈՎ**

*Հիմնաբառեր. ՀՀ բանկային համակարգ, կլաստերացում,  
նեյրոնային ցանց*

Աշխատանքում կատարվել է ՀՀ բանկերի կլաստերացում Կոհոնենի նեյրոնային ցանցի միջոցով: Կլաստերներում բանկերի դասակարգումը հնարավորություն է ստեղծում բացահայտելու յուրաքանչյուր կլաստերում ընդգրկված բանկերին բնորոշ օրինաչափությունները: Բանկերի կլաստերացումը թույլ կտա ՀՀ կենտրոնական բանկին առավել արդյունավետ ընտրել բանկերի նկատմամբ կիրառվող վերահսկողության լծակները՝ հիմք ընդունելով դրանց կլաստերային պատկանելությունը:

Արհեստական նեյրոնային ցանցերը ներկայումս լայն կիրառություն են ստացել գիտության տարբեր ճյուղերում ծագած ամենաբարդ խնդիրների լուծման համար. որոշումների կայացում ու կառավարում, կանխատեսում, կերպարների ճանաչում, կլաստերացում ու դասակարգում, նեյրոկառավարում և այլն: Ձևակերպվելով որպես մաթեմատիկական ալգորիթմների բազմություն, որի նպատակը գլխուղեղի կենսաբանական գործընթացների ուսումնասիրումը և նեյրոցանցային արհեստական բանականության ստեղծումն էր, ներկայումս նեյրոնային ցանցերն ապահովում են բարդ տրամաբանական կառուցվածքների մեծ արագություն, գործողությունների զուգահեռ կատարում, դժվար ձևայնացվող խնդիրների լուծման հնարավորություն և այլն:

Նեյրոնային ցանցերը ինքնաուսուցվող համակարգեր են: Ինքնաուսուցման ընթացքում, սովորելով բավական մեծ ծավալի տեղեկատվության (օրինակների) վրա, ցանցն ունակ է դառնում բացահայտելու մուտքային և ելքային տվյալների միջև թաքնված ամեն-